

2019 թվականի հունվարի 29-ին, ժամը 15.00-ին գումարվեց «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի (այսուհետ նաեւ՝ Հիմնադրամ կամ Համալսարան) հոգաբարձուների խորհրդի (այսուհետ նաեւ՝ Խորհուրդ) հեռակա քվեարկությամբ (հարցման միջոցով) նիստը: Խորհրդի 28 գործող անդամներից քվեարկությանը մասնակցում էին հետևյալ 20-ը.

1. Վիկտոր Աբրահամյան – Խորհրդի անդամ,
2. Թոռնիկ Ալիյան – Խորհրդի անդամ,
3. Արմեն Բաբայան – Խորհրդի անդամ,
4. Ջուլիետտա Գեորգյան – Խորհրդի անդամ,
5. Գուրգեն Եղիազարյան – Խորհրդի անդամ,
6. Սերգեյ Երիցյան – Խորհրդի անդամ,
7. Վոլոդյա Էլբակյան – Խորհրդի անդամ,
8. Աղավարդ Խաչատրյան – Խորհրդի անդամ,
9. Հակոբ Խաչատրյան – Խորհրդի անդամ,
10. Գոռ Խաչատրյան – Խորհրդի անդամ,
11. Արեգ Խոջոյան – Խորհրդի անդամ,
12. Քրիստինե Խուրշուդյան – Խորհրդի անդամ,
13. Արմեն Հարությունյան – Խորհրդի նախագահ,
14. Արմինե Հովհաննիսյան – Խորհրդի անդամ,
15. Կարեն Ղարախանյան – Խորհրդի քարտուղար,
16. Իրինա Ղափլանյան – Խորհրդի անդամ,
17. Գոհար Մամիկոնյան – Խորհրդի անդամ,
18. Արփինե Մկրտչյան – Խորհրդի անդամ,
19. Նունե Սիմոնյան – Խորհրդի անդամ,
20. Արտակ Քամալյան – Խորհրդի անդամ:

Նիստը նախագահող՝ Խորհրդի նախագահ Ա. Հարությունյանը ներկայացրեց նիստի օրակարգը և առաջարկեց տալ կարծիք: Օրակարգի վերաբերյալ առարկություններ և առաջարկություններ չեղան: Քվեարկությամբ միաձայն հաստատվեց նիստի հետևյալ օրակարգը.

1. «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 2018 թվականի գործունեության հաշվետվության և 2019 թվականի բյուջեի նախահաշվի նախագծի քննարկման և հաստատման հարցը,  
Զեկուցող՝ Վ. Ուռուտյան
2. «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 2019 թվականի կառուցվածքի և հաստիքացուցակի քննարկման և հաստատման հարցը,  
Զեկուցող՝ Վ. Ուռուտյան
3. Այլ հարցեր:  
«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 2018 թվականի ֆինանսական տառվա հաշվետվությունների (ֆինանսական գործունեության) աուդիտ իրականացնող անձի ընտրության և հաստատման հարցը:  
Զեկուցող՝ Վ. Ուռուտյան

Օրակարգում ընդգրկված բոլոր հարցերի վերաբերյալ նյութերը նախապես տրամադրվել էին Խորհրդի բոլոր անդամներին:

Բացման խոսքով հանդես եկավ Խորհրդի նախագահ Արմեն Հարությունյանը, որը խորհրդին ներկայացրեց 2018 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՀ վարչապետի որոշումով հաստատված հոգաբարձուների խորհրդի նոր անդամներ՝ Արտակ Քամայանին, Իրինա Ղափլանյանին, Արմեն Բաբայանին, Թոռնիկ Ալիյանին:

## **Հարց 1**

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 2018 թվականի գործունեության հաշվետվության և 2019 թվականի բյուջեի նախահաշվի նախագծի քննարկման և հաստատման հարցի վերաբերյալ զեկույցով հանդես եկավ ՀԱԱՀ ռեկտոր Վարդան Ուռուտյանը:

ՀԱԱՀ ռեկտոր Վարդան Ուռուտյանը հանգամանորեն ներկայացրեց համալսարանի 2018 թվականի ուսումնական, գիտական և ֆինանսատնտեսական գործունեությունը՝ մանրամասնորեն հիմնավորելով հաշվետվության մեջ տեղ գտած թվական տվյալները:

Հարցի շուրջ արտահայտվեցին հոգաբարձուների խորհրդի անդամներ Կարեն Ղարախանյանը, Գահար Մամիկոնյանը, Արտակ Քամայանը, Իրինա Ղափլանյանը, Աղավարդ Խաչատրյանը, Գուրգեն Եղիազարյանը, Գոռ Խաչատրյանը, Արմինե Հովհաննիսյանը: Արտահայտվողները բարձր գնահատական տվեցին Հայաստանի ազգային ագրարային համալսարանի 2018 թվականին կատարված բարեփոխումներին, ինչպես ուսումնական գործընթացի կազմակերպման, այնպես էլ գիտական և ֆինանսատնտեսական ոլորտներում:

Բաց քվեարկության դրվեց «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 2018 թվականի գործունեության հաշվետվության և 2019 թվականի բյուջեի նախահաշվի նախագծի քննարկման և հաստատման հարցը: Քվեարկությանը մասնակցեցին խորհրդի 20 անդամներ: Ձայները բաշխվեցին հետևյալ համամասնությամբ՝  
Կողմ՝ 20,  
Դեմ՝ 0,  
Ձեռնպահ՝ 0:

## **Որոշում 1**

Խորհուրդը որոշեց հաստատել «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 2018 թվականի գործունեության հաշվետվությունը և հաստատել «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 2019 թվականի բյուջեի նախահաշիվը (կցվում է):

## **Հարց 2**

Օրակարգի 2-րդ՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 2019 թվականի կառուցվածքի և հաստիքացուցակի փոփոխությունների քննարկման և հաստատման հարցի վերաբերյալ զեկույցով հանդես եկավ ռեկտոր Վարդան Ուռուտյանը:

Հարցի շուրջ արտահայտվեցին, Գոռ Խաչատրյանը, Արտակ Քամայանը, Վոլոդյա Էլբակյանը:

Բաց քվեարկության դրվեց «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 2019 թվականի կառուցվածքի և հաստիքացուցակի հաստատման հարցը: Քվեարկությանը մասնակցեցին խորհրդի 20 անդամներ: Ձայները բաշխվեցին հետևյալ համամասնությամբ՝

Կողմ՝ 20,  
Դեմ՝ 0,  
Ձեռնպահ՝ 0:

## **Որոշում 2**

**Խորհուրդը որոշեց հաստատել «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 2019 թվականի կառուցվածքի և հաստիքացուցակի փոփոխությունները (կցվում է):**

## **Հարց 3 (Այլ հարցեր)**

Օրակարգի 3-րդ՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 2018 թվականի ֆինանսական տարվա հաշվետվությունների (ֆինանսական գործունեության) աուդիտ իրականացնող անձի ընտրության և հաստատման հարցի վերաբերյալ զեկույցով հանդես եկավ ռեկտոր Վարդան Ուռուտյանը:

Ներկայացրեց, որ «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի եւ Համալսարանի կանոնադրության համաձայն Համալսարանի ֆինանսական հաշվետվությունների (ֆինանսական գործունեության) աուդիտ իրականացնող անձի ընտրությունը Խորհրդի իրավասությունն է: Համալսարանի ֆինանսական հաշվետվությունների (ֆինանսական գործունեության) վերստուգումը կատարվում է անկախ աուդիտորի կողմից՝ առնվազն յուրաքանչյուր տարին մեկ անգամ: «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն Համալսարանի աուդիտոր է առաջադրվել «Հայաուդիտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (պետական գրանցման համար՝ 286.110.02711):

Հարցի շուրջ արտահայտվեցին Արմեն Հարությունյանը, Կարեն Ղարախանյանը, Վոլոդյա Էլբակյանը:

Բաց քվեարկության դրվեց «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 2019 թվականի կառուցվածքի և հաստիքացուցակի հաստատման հարցը: Քվեարկությանը մասնակցեցին խորհրդի 20 անդամներ: Ձայները բաշխվեցին հետևյալ համամասնությամբ՝

Կողմ՝ 20,  
Դեմ՝ 0,  
Ձեռնպահ՝ 0:

## **Որոշում 3**

**Խորհուրդը որոշեց՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 2018 թվականի ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունների (ֆինանսական գործունեության) աուդիտ իրականացնող անձ ընտրել եւ հաստատել «Հայաուդիտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (պետական գրանցման համար՝ 286.110.02711):**

Օրակարգի հարցերը սպառվեցին, հոգաբարձուների խորհրդի նիստը հայտարարվեց փակված:

Արձանագրությունը կազմվել է 2019 թվականի փետրվարի 4-ին: